

ASTORIA

91866 91867

21.800 6

SEPS 1.1846

69



Այս ամսվա համարում Այսին և Այլընդամենը Դժվարություններ, 1630-ին :

Յամլի Տեառն 1630 , սոսկալի ժանտախտ
մը պատահելով Միլան քաղքին մէջը,
մեծ ջարդ ըրաւ : Պատմիչները մինչեւ
140 , 000 հոգիի կը հասցունեն մեռնողնե-
րուն թիւը : Վեարոս Վ կրրի կոմսը՝ աս պա-
տուհասը և անոր ըրած ջարդը խիստ աղ-
ղու կերպով մը նկարագրելէն ետքը , քանի
մը խորհրդածուծիւններ ալ կընէ , սըն որ
կընամք յառաջաքանուծիւն մը սեպել
վատահամբաւուծեան սիւնին պատմու-
ծեանը :

«Երբ որ հասարակութիւնը մեծ թըշուառութեան մէջ կը գտնուի, կըսէ ան, մարդկային մտայ տկարութիւնը՝ յօժարութիւն մը ունի միշտ կասկած ընելու թէ տարօրինակ բաներէ կառաջ կուգայ ան պատուհասը. ամենէին չմտածէր թէ բնական օրէնքներուն ընթացքն է միայն անոր պատճառը: Եւոր համար է որ կը տեսնուին երբեմն անանկ պարզամիտ երկրագործներ՝ որ կարկուտ եկած ատենը սրտերնին կընէ զանայ և չեն ըսեր թէ մթնոլորտն է անոր պատճառը, հասկա անանկ կը կարծեն թէ

կախարդները կը հասցունեն իրենց ան վընասը՝ կարկուտ իջեցունելով : Ընանկ եղաւ Սիւրանու մէջ ալ 1630 թուականին : Ըն մեծ և զօնակ աղետից ատենը՝ քաղաքիս բնակիչները՝ առ թշուառութեան աղբիւրը կը փնտրուէին մարդկային չարութեանը մէջ, և ժանտախտին ըրած սոսկալի կոտորածը՝ որ կըսպառնար բնաջինջ ընել զիրենք, կարծեցին որ առ զին ան զին քրառած փոխադրական հեղուկէ մը յառաջ կուգայ : Աստի որ և իցէ աղտեղութիւն մը տեսնէին պատերուն վրայ՝ սոսկումով կընայէին անոր . և թէ որ մէկը անզգուշութեամբ ձեռքը երկնցունէր և պատին զրպչելու ըլլար՝ ուսմիկ ժողովուրդը կատղած մէկէն անոր վրայ կը թափէր և ահաբեկ աղաղակներով բանտը կը տանէին, և երբեմն ալ ան նոյն տեղը կըսպաննէին զանիկայ : Երբեք Վաղը խացի ճամբորդներ՝ որոնք կայնէր մայր եկեղեցւոյ չէնքին ճակատը կը գննէին, մարմարիոններուն ձեռք դպցուցած ըլլալնուն համար՝ սաստիկ ծեծ մը կը բան և բանտը դըռնեցան : Աւթուն տարեկան պատուաւոր ծերունի մը՝ իր վերարկուն քղանցովը՝ նստարանին փոշիները սրբելուն համար՝ որուն վրայ պիտի նստէր սուրբ Ընտոնի եկեղեցիին մէջը, անմիջապէս չորս զիէն պաշարեցին զանիկայ, և մորուքէն քաջքըւտելով զարկին գետինը՝ վրան թափեցան և անանկ ծեծ մը տուին ողորմելի ծերունիին, որ քանի մը ըտպէի մէջ սպաննեցին զանիկայ : Վաղաքին կառավարիչները չէ թէ միայն հոգ չէին տանէր որ մայրութիւնը բնաջինջ ընելու, և առ բռնութիւնները զսպելու, հապա իրենք ալ մէկ եղեր էին հասարակութեանը հետ : Ըհա առ կացութեանը մէջ էին Սիւրանու բնակիչները՝ երբ որ պատահեցան հետագայ զիպուածները, որն որ Սիւրի կոմսը՝ և անկից ետքը հաշակաւոր Սանծօնի հեղինակները կը պատմեն :

1630, յունիսի 21ին՝ առտուան ժամը չորսին ստանները, աղքատ կնիկ մը կատարինէ Ռօզա կոչուած, զիպուածով մը կը նոյեք կամարած և յարկի մը պատուհանէն, որ լծեալնոյն զբանը մօտ էր : Ըս կնիկը

տեսաւ որ սև վերարկու մը հագած մէկը կուգար, զիւարկը աչքերուն վրայ իջեցուցած՝ ու ձեռքը թուղթ մը՝ որուն վրայ մէկալ ձեռքը դրէր էր և կարծես թէ զիւր կը գրէր . առ ալ տեսաւ որ փողոցը մտածին պէս՝ տներուն կը մօտիկնար և պատերուն վրայ տեղ տեղ ձեռքը կը քսէր : Ըն տները կնիկանը միտքը ինկաւ թէ գուցէ առ մարդը անոնցմէ է որոնք պատերը կը թունաւորեն : Ըս կասկածով աղմկած՝ ուրիշ սենեակ մը գնաց, ուսկից ծայրէ ի ծայր փողոցը կերևնար, որպէս զի աչքին առջևէն չկրնային տեսնել առ մարդը, և տեսաւ որ անիկայ միշտ իր ձեռքերը պատերուն կը դպցունէ : Աւրիշ տան մը պատուհանէն ալ նոյն փողոցին մէջը, () զգաւ Վոնօ անուանով կնիկ մը՝ առ մարդուն ըրածը տեսնելով՝ նոյն կասկածը ունեցաւ : Հաւանական է թէ յիշեալ մարդը իր մատներուն մեղանքը կըսրբէր պատին վրայ . սակից զատ՝ լորուստ անձրև կուգար, որչափ որ հնար է չթըջուելու համար՝ տներուն տակէն կանցնէր պատերուն քսուելով :

Բայց ան երկու կնիկները առ բանը չէին մտածեր . ձայն տուին մէկմէկու, սկսան իրենց կարծիքը ըսել . նաև կարելի է որ տանց մէկը բնաւ կասկած մը չունեցաւ մինչև որ մէկալը իր միտքը զրգուեց : Ըն չէ իցէ՝ տանք վերստին սկսան զիտել ան մարդուն շարժումները, ու տեսան որ մէկը գալով ան զիէն՝ անմանթ մարդուն բարեւ տուաւ : Երբ որ առ նոր եկողը կատարինէին պատուհանին առջևէն կանցնէր, առ կնիկը հարցուց անոր թէ «Ո՞ր է ան մարդը որ դուն բարեւեցիր» : Վատասխան տուաւ անիկայ, թէ «Ընողջութեան վերակացուներուն մէկն է բայց անունը չեմ գիտեր» : Կատարինէ անմիջապէս ըսաւ անոր, թէ «Ըս տեսայ առ մարդուն անանկ շարժումները ընելը՝ որ ինծի հաճելի չէն» :

Քանի մը վայրկեանէն ետքը՝ առ զիպուածը բերնէ բերան պատմուելով, նոյն փողոցին մէջը եղողները տմէնքն ալ իմացան : Աստի բոլոր բնակիչները իրենց տներէն դուրս ելլելով՝ գացին պատերը աչքէ անցընելու, և ամէն մէկը կաշխատէր որ ինքը ուրիշներէն աւելի բիծեր գտնէ պատերուն վրայ : Ըս յիշաւ շուտով գտան

¹ Ինչ, էնէն :

անոնք տեղ տեղ այնպիսի աղտեր, որոնք գուցէ շատ տարիններէ ՚ի վեր կրկնային հոն, և մէկը ուշադրութիւն ըրած չէր անոնց: Բայց հիմա ամէն մարդ անտարակոյս կը հաւատար օր ան անձանօթ մարդը ըրած է զանոնք. վասնորոյ բազմութիւնը վաղեց յարդի կապոյցներ բերաւ, վառեց զանոնք պատերուն տակը, որ անոր ծուխովը մաքրուին:

Սակայն հասարակութեան աղմուկը հետըզհետէ շտանալով, շատ չքշեց բոլոր քաղաքին մէջը տարածեցաւ աս լուրը. և դեռ իրիկուն չեղած ուրիշ զրոյց մը չկար Սիւլանու մէջ, բայց միայն ան չարագործ մարդուն վրայով որ իւղալից և մահառիթ նիւթ մը ան փողոցին պատերուն և դռներուն վրայ քսեր էր:

Ծերակոյտը հրաման ըրաւ արդարութեան վերակացուն, որ անմիջապէս երթայ աղէկ տեղեակ ըլլայ աս անցքին: Ըսիկայ իր հետը տարաւ պատժապարտից նոտարը. և երկուքն ալ գացին ստուգելից որ պատերը ծխոտած են, ու անցքին համար վըկայութիւններ ալ ժողովելին: Եւ առաջին քննութեան պտուղը ան եղաւ, որ իմացուեցաւ թէ յունիս 21ին առտուն՝ կատարինէ Ռօզա և ()դղամիս Պօնօ կնիկներուն տեսած առողջութեան վերակացուն, կուրէշմա փիացցա կրկնուի: Ուստի անմիջապէս աս ողորմելի մարդը վերցունելու հրաման եղաւ, և բռնեցին բանտը զրին զանիկայ: Եւ քանի մը հողի խրկեցին աւոր տունը, որոնք ամէն բան տակնուվրայ ըրին որ հեղուկի ամաններ կամ ստակ դրոտեն. բայց բան մը չգտան:

Եւ զի անգամի հարցմունքը որ ըրին աս մարդուն՝ ստիկայ էր. «Կիտե՞ս արդեօք որ քաղաքիս տներուն որմոյր վրայ աղտեղութիւններ դնուած են, մասնաւորապէս խէսինօյի գրանը մօտ տեղուանքը»: «Բնաւ չեմ գիտեր, ըսաւ, քանզի գործ մը չունիմ ես խէսինօյի գրանը կողմը»: «Եւ խօսքը հաւանական չեւեւար ինծի, կրկնեց ատենակալը»:

Երկրորդ հարցմունքը՝ յունիս 21ին ինչպէս իր օրը անցունելու վրայօք եղաւ: Պատասխան տուաւ թէ «Երբովնա պէտքուն կեկեղեցի մը փոխանորդներուն հետն էի, ու

իմ պաշտօնս էր վերակացութիւն ընել առողջութեան ատենին քանի մը հրամաններուն գործադրութեանը»: Եւ արցուցին իրեն աս փոխանորդներուն անունները: «Կատասխան տուաւ, թէ «Եւ կը ծանօնամ զանոնք, բայց անունին չեմ գիտեր»: «Եւ կարծեր որ ըսածիդ պէս ըլլայ», ըսաւ ատենակալը. յետոյ խտուրթեամբ խօսելով անոր՝ հրամայեց որ անկեղծութեամբ պատասխանէ, թէ որ չուզեր որ տանջանք տան իրեն շտակը զուրցնելու համար: «Եւ թէ ձեր տեղութիւնը՝ ըսաւ փիացցա, ուղէ նէ կրնայ նաեւ զիս կսիւնել տալ. բայց ես ձեր հարցուցածին վրայով բան մը չեմ գիտեր»:

Եւ պատասխանին վրայ բարկացան, և անամօթ մարդու տեղ զնելով զանիկայ սկսան չարչարանք տալ և ստիպել որ շտակը զրուցէ: Ողորմելի փիացցան՝ որ տանջանքին մէջը կաղաղակէր, կը հեծէր և կաղաչէր, ասանկ պատասխան տուաւ. «Երբէն ըսած եմ հէր, ալ ուրիշ բան մը չեմ գիտեր»: Բայց անոնք կը սնդեին թէ շտակը ըսէ: «Եւ, աղաղակեց ողորմելին, ՚ի սէր Եւտուծոյ, դադրեցուցէք տանջանքը՝ որ գիտցածս ըսեմ. հրաման ըրէք որ քիչ մը ջուր տան ինծի»: Տանջանքը դադրեցուցին և թող տուին որ նստի. երբ որ վերստին սկսան հարցունել պատասխան տուաւ. «Բան մը չեմ գիտեր. կաղաչեմ հրամայեցէք որ քիչ մը ջուր բերեն ինծի»:

Տանջեցէք աս անիրաւը, կրկնեց ատենակալը: Ուստի վերստին սկսան կապել և չարչարել խեղճ մարդը, ստիպելով որ շտակը զրուցէ:

Եւ զի բերանը սաստիկ կը պուար թէ «Եւ գիտցածս ըսի», ու ետքը տանջանքէն տըկարացած՝ ցած ձայնով նոյնը կըսէր, մինչև ան ատենը որ դատաւորները տեսնելով թէ քիչ մըն ալ երթայնէ ալ պիտի չկրնայ ամենեւին պատասխան մը տալու, հրամայեցին որ նորէն բանտը տանին զանիկայ:

Յունիսի 23ին՝ ծերակոյտին պատմուած ըլլալով գործը, աս բարձրագոյն ատենը վճռեց, որ «փիացցային դուրսը ածիլէն և յանցաւորի հաղուստը հազցունելէն ու մաքրողական գեղ մը խմցունելէն ետքը, արտաքոյ կարգի սաստիկ տանջանք տան

անոր, բոլոր անդամները կապեն խիստ սեղմ լով, քանի անգամ որ ատենակալ դատաւորները հրամայեն, փոխանակ ստուծիւններուն և կեծաւոր խօսքերուն որ դատաստանի ժամանակը զրուցէր է ան՝: Եւ յետեւ կը թուի թէ աս սովորութիւնը՝ յանցաւորներուն զուլսը ածելէ լու, հազուէրունելու և մաքրելու, ան սնապաշտութենէն յաւաջ կուգայ որ կը կարծէին թէ անոնք իրենց մաղերուն մէջը՝ լաթերուն և մինչև անգամ աղիքներուն մէջը, կուլ տալով՝ նուախայ մը կամ սատանային հետ եղած դաշնադրութեան գիր մը կը պահէին. վասնորոյ հարկաւոր կըսեպէին աս կերպով անոնց ունեցած գէնքը յափշտակելու:

Երբ որ նոր տանջանքները սկսան, ողորմելի փրացցան վերստին կաղաղակէր ցաւալի ձայնով մը. «Մհ, տէր Եստուած իմ, ոհ, աս ի՞նչ մարդասպանութիւն է: Ո՞վ դատաւոր, գոնէ զիս կախել տուր շուտով... Չեւքս կտրել տուր, թող զիս մեռցունեն. կամ գոնէ վայրկեան մը դադրին տանջէին... Եւ, տէր նախագահ... ի սէր Եստուծոյ հրաման ըրէ որ քիչ մը ջուր տան ինծի... Ես բան մը չեմ գիտեր. ես ճշմարիտը ըսի՞»:

Եւ զարհուրելի տեսարանը թէ և անդադար շարունակելու ըլլային, օգուտ մը պիտի չգտային անկից. փուճ ահղը կը հարցունէին անոր յանցանքին խոստովանութիւնը, պարագաներուն պատմութիւնը, իր բնկերներուն անունները, ինչու որ փրացցան՝ իր բոլոր ոյժը կորսնցուցած ատենը անգամ, տակաւին իր անմեղութիւնը կը հաստատէր: Ս անորոյ ուրիշ միջոցի մը ձեռք զարկին: Եւ ողջութեան վերակայուն ծերակոյրին հրամանաւր ազատութիւն խոստացաւ փրացցային, աս պայմանով որ ամբողջ ճշմարիտը զրուցէ: Եւ ազատութեան խոստմանքը, որ ամենեւին մոքերնին դրած չէին կատարելու, վաւերական գրով ինչպէս որ սովորութիւն է, չտրուեցաւ. և թէպէտ աս բանին պէտք չէր վատահիւ, այսու ամենայնիւ փրացցան խաբուելով հաւտաց: Բանդի՛ ալ չկրնալով համբերել իր տանջանքներուն, և համոզուելով որ ազատութեան ճար չկայ իրեն, եթէ ոչ իր դատաւորներուն ուղածը ընելով, թէ

և իր պատուոյն և ճշմարտութեան դէմ բան մը ըլլայ ան, յաղթուեցաւ աս փորձութենէն և սկսաւ սուտ խօսքեր զրուցել:

Ո՞վ կրնայ արդեօք բացատրել, կրնէ պերճախօսն Սանժոնի, աս մարդուն սրտին մէջը եղած պատերազմը՝ որն որ անշուշտ կը զգար ան, միտքը բերելով իր կրած տանջանքը, նորէն տանջուելու երկիւղը, և սոսկումը՝ թէ ուրիշներն ալ իր թշուառ վիճակին մէջ պիտի ձգէ. երբ որ աղետալի մահուանէ ազատուելու յոյսը՝ սոսկալով միտքը կը բերէր թէ անիկայ ուրիշ անմեղի մը մեռնելուն պատճառ պիտի ըլլայ: Բանդի չէր հաւտար որ իրենց որսը պիտի թողուն անոնք, մինչև որ գոնէ ուրիշ մը ձեռք չբերեն և վերջապէս չմեռցունեն զանիկայ: Եւ ամենայնիւ չկրնաւ համբերել, տեղի տուաւ փորձութեանը և ընդունեց աս սոսկալի և անստոյգ ակնկալութիւնը. և որչափ որ գարշելի և դժուարին գործ մըն էր ասիկայ, այսու ամենայնիւ որոշեց որ մէկը գոնէ իր տեղը, և զանիկայ ձեռք տալով ինքը ազատի: Բայց ի՞նչպէս գտնէր անանկ մէկը, որ բարձր վերցունէր. որովհետեւ չկար մէկը որ ասանկ յանցանք մը ունենար: Ինքը իրօք աւելի տուած էր իրեն դէմ եղած ամբաստանութեանը. քան զի ան նոյն փողոցը մտեր էր, պատերուն տակէն անցնելով անոնց դպէտէր էր. մէկ կնիկ մը տեսած էր զինքը. ստոյգ է որ սխալ մոնք ունէր ան՝ բայց վերջապէս բան մը տեսած էր: Ուստի միտքը եկաւ մէկ դիպուած մը՝ որ թէպէտ ոչինչ բան մըն էր, ինչպէս որ պիտի տեսնեմք հիմա, բայց անով հաստատեց իր միտքը թէ ով պիտի գտնէ և ինչ սուտ պիտի շինէ:

Պէտք չառնալով:

Սեղբին պզտիկը չկայ. քանզի Եստուած՝ որուն դէմ մենք կը մեղանք, պզտիկ էակ մը չէ: Իր մեծութիւնը՝ որ կը նախատուի, իր օրէնքը որ կանարգութի, իր իշխանութիւնը՝ որ կարհամարութի, իր փառքը՝ որ ոչինչ կըսեպուի, իր բարկութիւնը՝ որ կը գորգուի ամենափոքր մեղքով մը, ասոնք ամենը մեծ են և ոչ պզտիկ: «Սեղբին հատուցումը (չէ թէ մեծ մեղքին՝ այլ որ և իցէ մեղքին) մահ է»: Լուսն. Դ. 23: Սեղբ մը՝ թէ և շատ պզտիկ ըլլայ, բայց թէ որ մենք չապաշխարենք և թողութիւն չընդունինք, անշուշտ դուրս պիտի ձգէ զմեզ երկինքէն:

Նորմալի հիստորիայ :

Ընամեն բանը՝ որուն դործադրութիւնը ձեռնտու է ազգային ընդաքայս ներհակութիւնը բնաջինջ ընելու : արդարեւ ընդհանուր երախտագիտութեան արժանի է : Ընխարհիս ազգերը իրարմէ բաժնող սկզբունքները՝ որ բնականաբար զանոնք մէկ մէկու թշնամի կըրցուցընեն , անհիմն խօսքեր են և բարոյականի դէմ . վանորոյ շատ աղէկ խորհրդածութիւն մը կընէ մեր ժամանակի երևելի մատենագիրներէն մէկը : Ըսելով թէ «Ընխարհիս ազգերը արդէն սկսեր են հասկնալ , թէ անոնք ամենեւին իրարու հակառակութիւն մը չունենալէն ՚ի զտո՛» (ինչպէս որ կըսեն ոմանք որ կուզեն զանոնք խաբելով իրարմէ բաժնել , և բաժնելով աւելի ապահովութեամբ տիրել անոնց) , միևնոյն օգուտը ունին . արդէն աշխոյժ յօժարութիւն մը ունին մէկմէկու մօտենալու , և մէկզմէկ եղբայր ճանչնալու : Եւ շատ չերթար անոնք փոփոխակի պիտի օգնեն իրարու . քանզի ինչ որ կըբաժնէր զանոնք իրարմէ , արդէն երեւորելիքը և կործանելու վրայ է . հեռաւորութիւնները անգամ անհետ ըլլալու վրայ են :

Եւ հիմակու ընէ ահա իւրաքանչեւ հեռաւոր դարերու մէջ , ան երջանիկ ժամանակը՝ որ բովանդակ աշխարհս իբրեւ մէկ քաղաք պիտի ըլլայ մէկ օրէնքով մը կառավարուած , արդարութեան և սիրոյ , հաւասարութեան և եղբայրութեան օրէնքովը :

Յետագայ պատմութիւնը՝ աս ըսուած ճշմարտութիւնը և յոյսը կըհաստատէ . վանորոյ պարտք մը կըսեպէմք մեզի կըրցածնու չափ հրատարակել զանիկայ :

Թէմիզ գետին վրայ կռնիկ քաղաքին առջևը խորտիւծ վաղեմի կրկնայարկ նաւ մը կայ 104 թնդանօթ կրող , Լեւիւն-ը կողուած , որ տոհմօք պատերազմներ ըրած է Լեւիւնայի օգտին համար , և զուցէ շատ վընաս տուած է ուրիշ աղէերուն : Բայց այսօրուան օրս զխովին տարբեր պաշտօն մը ունի ան . թէ որ դէշութիւն ըրած է նէ՛ հիմա աղէկութիւն կընէ . թէ որ մարդ մեղցուցեր է նէ , հիմա մարդոյ կեանքը կը պաշտպանէ . թէ որ միայն մէկ ժողովուրդի մը փաստին և իրաւանցը համար զնետուրած է նէ , հիմա իր զենքերը մէկ զի ձգած է

բոլոր աղէաց համար : Ըն որ տոհմօք պատերազմական մեքենայ մըն էր , հիմա ողորմութեան ապաստանարանի մը փոխուեր է , հիւանդանոցի մը՝ ամեն երկրի հիւանդ և ցաւազար նաւաստիներուն համար :

Երբ որ Թէմիզ գետին եզերքը դռնուող նաւաստիներուն մէկը կըհիւընդնայ , որ ազգէ և որ քաղաքէ ըլլայ նէ , որ նաւին և որ նաւաստիներուն խումբին կըվերաբերի նէ , անմիջապէս կընդունին ան հիւանդանոցը և ձրիապէս ինամբ կըտանին անոր : Հարկ չէ հիւանդին որ յանձնարարական գիր և պաշտպանութիւն ունենայ մէկէն . աւոր ծովային մարդ ըլլալը , և օգնութեան կարօտութիւն ունենալը բաւական յանձնարարութիւն է իրեն : Ըն ամեն կերպ հոգողութիւնը կընեն անոր , ինչպէս որ իր տկարութիւնը կըպահանջէ , աւանց բաժնելու զնքը իրեն սիրելի ծովէն : Իր անկողինին մէջ կըղգայ ան ջուրերուն շարժմանքը . կըլսէ ալեքներուն և հովերուն ձայնը . և ասանկ իր երեւակայութեանը մէջ շարունակ նաւարկութիւն կընէ :

1821էն ՚ի վեր՝ որ ան ժամանակը կարգի դրուեցաւ աս հիւանդանոցը ուրիշ նաւու մը մէջ , ու ետքը 1831ին անոր յաջորդեց Լեւիւն-ը նաւը , զրեթէ երեսուն հազար նաւաստիներու դարման տարուեցաւ աս հիւանդանոցին մէջը : Եւ 1837ին հրատարակած յայտարարութենէն կիմանամք , թէ սկիզբէն մինչև անատենը ընդունուած էին հոն՝ օտարազգիներէն 111 Վաղդիացի , 364 Վերմանացի , 251 Ռուս , 495 Իրուսիացի , 90 Հոլանտացի , 383 Վանեցի , 745 Սուէտացի և Վորվեկիացի , 192 Իտալացի , 232 Փորդուկէզ , 92 Սալանիօ , 210 Երևելեան Նիդերլանդացի , 466 Երևմտեան Նիդերլանդացի , 299 Լեւիւնայի Լեւիւնայի , 473 Լեւիւնայի Սիւրիացի , Կահանգներէն , 62 Հարաւային Լեւիւնայի , 149 Լեւիւնայի , 7 Տաճիկ , 15 Հոյն , 21 Կոր , Բելանտացի , 109 Հարաւային ծովու նաւաստիներէն , 29 Չինացի , 66 նաւաստի ծովու վրայ ծնած : Ըսոնցմէ դուրս եղածները՝ որ նոյն յայտարարութեանը մէջ զրուած էին , Լեւիւնայի , Իտալացի և Սկովիացի էին :

Ըս հիւանդանոցին բոլոր ծախքերը աւատօրէն կըհոգայուին հասարակաց ստո-



ՍԵՐՈՒՆ ԿԵՐԷ:

Ես պատկերը գծագրողը՝ որ փոքր Լսիս յի ամէն կողմը ճամբորդութիւն ըրեր է, ու Գահիրէի և Լիքսամպուրիայի մէջ ալ բնակիր է, յետագայ պատմութիւնը կրնէ վիթ՝ որսալու վրայով:

«Լրաբիոյ անապատներուն մէջ բազմաթիւ է աս տեսակ կենդանին, և ճամբորդները շատ անգամ կը պատահին անոնց. անանկ որ՝ կարծես թէ ամենեւին չեն վախնար կարաւաններէն. քանզի երբեմն ալ քիչ մը հեռուանց կը կենան կը դիտեն անոնց անցնելը. բայց թէ որ բարձր ձայներ հանեն, կամ թէ անոնց վրայ երթալ ուղեն, իսկոյն կը դիտուին աներևոյթ կը լան: Ենապատին ան կողմը աւելի կը սիրեն անոնք, ուր որ գետինը հարթ՝ ու թուփերով և աւաղով ծածկուած է: Զորեկը քիչ կը պատահի որ չորս հինգ հատէն աւելի մէկ տեղ տեսնուին. իրիկուան դէմ միայն գունդ գունդ մէկտեղ կը հաւաքուին որ գիշերը նոյն տեղուանքը անցունեն: Երբ որ գիտէ մէկը ասոնց որ կողմը ժողուելը, կըրնայ յանկարծ վրանին հասնիլ որսալու համար: Լրաբայիք զանազան միջոցներ գործկածեն աս կենդանիները բռնելու. մանաւանդ կը սիրեն բռնել զանոնք տեսակ մը վարժուած ինձերով, որն որ փոքր է և Գաղղիացիք կէֆու կանուանեն: Զիաւորը՝

իր ձիուն վրայ կը դնէ աս կենդանին ու անանկ որսորդութեան կըրտանի. բայց սովորաբար տաճիկ ուղտի մը վրայ հեծնելով մէկտեղ կառնեն զանիկայ, ու կերթան կը փնտռեն ան տեղուանքը՝ ուր որ վիթերու գունդ մը գիշերը կեցած է: Որսորդ կենդանին երբ որ ուղտին վրայէն կը տեսնէ անոնց փախչելը, անմիջապէս վար կընետուի ետեւուն կիյնայ, և հազիւ երբեք կը պատահի որ գոնէ անոնց մէկը չբռնէ: Երբեմն ալ երբ որ ձիաւորը կը տեսնէ որ շատ հեռացած են անոնք, կը ջանայ անոնց ճամբան կտրել ու ետքը՝ ժամանակին իր գիրկը հղած անասունը անոնց դէմ կը պարծալէ, և ասիկայ է որսորդին վարպետութիւնը: Ես կերպ որսորդութեամբ՝ շատ անգամ կը պատահի որ ողջ կը բռնէ վիթերը և զանոնք աւելի գինով կը ծախէ»:

Հնդկաստանի մէջ ուրիշ եղանակաւ մը կընեն Կեփարով որսորդութիւնը: Ենգղիացիք Սէրինկաբադամի առնելէն ետեւ երբ որ նոյն տեղի թագաւորին բոլոր ստացուածքին տիրեցին, տասնուվեց Կեփար գըտան հոն, որոնց զրեթէ ամէնն ալ աղէկ վարժուած էին: Զիշտալ թագաւորէն առնուած բաներուն ցուցակին մէջ՝ աս կենդանիներն ալ գրուած են, ինչպէս և անոնց վերաբերեալ բոլոր բաները: Վանդի աս կենդանեաց ամէն մէկուն համար թիթիւ կառք մը կար՝ երկու եզներ զանիկայ քաշէ

1 Շէյրան:

2 Տէւլ:

լու , և երկու ուրիշ եզներ ալ՝ փոխելու համար , երկու պահապան և մէկ որսորդ մը . ասոնց ամէնուն որսորդապետ մը կը հրամայէր , որ իսկ մը ուրիշ ծառաներ ալ ունէր իր հրամանին տակը :

Երբ որ Թագաւորը որսի ելելու միտք ունի , կըսէ անատենի պատմագիր մը , առջի օրուէնէ կիսացունէ որսորդապետին , որպէս զի հետեւեալ աւատուն կանուխ պատրաստ ըլլան : Երջալոյսը ծագելուն պէս ճամբայ կելլեն , անանկ որ դէպի վեցերորդ ժամուն (ըլլաւ .) որսը կըսկսին : Կեփարները տանող կառքերը կարգաւ առջեւէն կերթան , և Թագաւորն ալ իր ուղեկիցներովը լուիկ անոնց քովէն : Երբ որ կըմտենան ան տեղին՝ ուր որ կըկարծեն թէ վիթ կըգտնուի , ալ աւելի զգուշութիւն կընեն , և կառքերը վարող որսորդապետը կըպատրաստուի վիթերու գունդին վրայ հասնիլ ան կողմէն՝ ուսկից որ պիտի փախչին , և որ զառ ՚ի վեր ու խորուբորտ է : Գանգի անգամ մը որ աւանկ կարգէն զնեն բանը , Կեփարները կընան յաջողութեամբ իրենց որսորդութիւնը ընել :

Երբ որ վիթերը կերենան , խկոյն վանդակէն դուրս կըհանեն առաջին Կեփարը , ու անոր գլխու ծածկոյը կըբանան , որով մինչև ան ատենը աչքերը դոյ են : Թէ որ վիթ մը ուրիշներէն զատուած գտնուի , դէպի անոր կըվազէ Կեփարը . բայց թէ որ մէկ տեղ հաւաքուած կեցած են , անոնց ամենէն ուժովին վրայ կըյարձակի : Կախ՝ կամայ կամայ խոտերուն մէջ մտնելով ու անանկ տարածուելով փորին վրայ՝ որ հազիւ թէ կըտեսնուի : Եւ ատ անգամ ուղղակի չեթար , այլ ան կողմէն որ աւելի զիւրութեամբ և առանց տեսնուելու կընայ մտնիկալ . ու հարկէր քայլի չափ մնացած՝ մէկէն ընթացքը կըփոխէ և բոլոր ուժովը կըյարձակի . խիստ արագ կըվազէ , բայց իր արագութիւնը երկարատեւ չէ : Թէ որ 2-300 զրկաչափ տեղ վազէլէն ետեւ չհասնի իր որսը բռնելու , ալ անոր ետեւէն չիշնար : Աւ անատենը կարծես թէ կամենայ ծանր կըբալէ , և կըթողու որ իր պահապանները կըմօտիկնան իրեն , վերստին գըլուխը կըծածկեն և կառքը կըդնեն : Բայց

թէ որ բռնելու ըլլայ վիթը՝ անմիջապէս գետինը կըզարնէ զանիկայ և վզէն կըխածնէ կըկենայ՝ առանց վերաւորելու ուրիշ տեղաց , մինչև որսորդին հասնիլը . որ եկածին պէս՝ նախ անասունին գլխարկը կանցունէ , ապա վիթը կըմորթէ կըտոր կտոր կընէ և անոր մէկ կտորը Կեփարին կուտայ , ու երբ որ ուտէ լըմնցունէ նէ , անատենը նորէն իր վանդակը կըդնեն զանիկայ :

Երբեմն ողջ կըբռնեն վիթը . բայց աս բանիս համար պէտք է որ շատ ճարպիկութիւն բանեցունէ որսորդը , և ասանկով ալ իր բրած քաջութիւնը վտանգաւոր է : Երբ որ վիթերը խիստ բազմութիւն են , երկու երէք և մինչև չորս Կեփար թող կուտան անոնց վրայ . ու անատենը շատ զուարճալի որսորդութիւն մը կըլլայ : Բայց ՚ի զին կեցողները պարտին զգուշանալ և հեռուէն դիտել մինչև որ անոնց աչքերը գոցուին . փորձուած է որ ձիաւորներուն վրայ աւելի կըյարձակի անասունը քան թէ ուրիշներուն , որ ատեն զայրացած կըդառնայ որսը փախցուցած ըլլալուն համար :

Հնդիկ Թագաւորին Կեփարներուն երեքը՝ Ենգղիոյ Թագաւորին տարին , բայց երկուքը միայն ողջ հասան : Եւ անց հասն էին իրենց առջի պահապանները , որոնց կըհընազանդէին աղէկ վարժուած շներու պէս . նաև հանդարտ կըկենային , և թող կուտային որ ամէն մարդ զգուէ զերենք : Էրն զիկ պահապանները շատ աղաչեցին որ վանդակներու մէջ չգըրուին ասոնք , այլ ազատ թողուն և քաղցրութեամբ վարուին անոնց հետ , ինչպէս որ մինչև անատենը սորված էին : Բայց աս աղաչանքին ականջ զնող չեղաւ . և Թագաւորը հրամայեց որ աս երկու Հնդիկները Պէնկալա դառնան , և անասունները յանձնուին փակարանին սովորական պահապաններուն :

Աս երկու Կեփարները անհանդիստ տեղ գըրուած ըլլալուն , և հետեւին խստութեամբ վարուելուն համար քիչ տեսնի մէջ անանկ վայրենի դարձան որ մէկը չէր համարձակեր անոնց քովը երթալու : Սէկ որ մը իրենց փակարանին դուռը աղէկ գոցուած չըլլալով՝ դուրս ելան և այնպիսի կերպարանք մը ցըցուցին զերենք բռնել ու

զողներուն, որ ամեն ալ սոսկալով հեռացան անոնցմէ: Թաղաւորը հրամայեց հըրապանով սպաննել զանոնք. շնորհները զիպուածով մը աս հրամանը խմանալով, որոնք անատներ նաւ մտնելու վրայ էին՝ որ իրենց երկիրը դառնան, անանկ տաղնապի մը մէջ ինկան և սկսան թախանձել, որ արքայական հրամանը յապաղեցին ու թող տուին իրենց որ Վինսորը երթան և կատարած կենդանիները քաղցրութեամբ բռնելու փորձ մը ընեն:

Մնասունները կեցած տեղին դուռը կիսով չափ բացաւ շնորհներուն մէկը, ներս մտաւ և անոնք տալով կանչեց ասոնց մէկը՝ որ աւելի մօտ էր իրեն: Մնասունը չուզեց ճաննալ իր պահապանը և զայրագին ձայնով մը մրմուռաց: շնորհը շփոթելով անմիջապէս զուրս ելաւ անկից. բայց շուտ մը ինքզինքին գալով իր ընկերը հետը առաւ և վերստին ներս մտաւ. ասոնց երկուքն ալ ձեռուրնին բռնել էին մէյմէկ գլխանոց, որով աս կենդանիին գլուխը կը ծածկէն: Կեփարը որ առջի անգամը բարկութեան նշաններ տուած էր, նորէն սկսաւ մրմուռալ երբ որ դէպի առաջ դացին. և որ ատեն առջեւէն գացող շնորհը մօտեցաւ, անոր վրայ յարձակեցաւ զարկաւ գետնը և թեւ խածաւ. բայց ան նոյն վայրկենին որ գլուխը վեր պիտի առնէր, մէկալ շնորհը գլխանոցը անոր գլուխը անցուց. անասունը անմիջապէս յիշելով իր առջի սովորութիւնը, նստաւ գետնին վրայ և սկսաւ լղել պահապանին ձեռքը՝ որն որ ինքը խածել էր: Իսկ մէկալ Կեփարը շուտ մը հնազանդեցաւ երբ որ գլխանոցը իրեն ցուցուցին:

Պէտք է կամ լսել կամ անանկ խօսքեր զըրուցել որ լուծենէն աւելի արժողութիւն ունենան: Լսելը աղէկ է որ փոքր տեղը քար մը նետես քան թէ մտախի և անօգուտ խօսք մը ըսես. նաև չըլլայ որ շատ խօսիս և քիչ բան հասկըցունես. հապա քիչ խօսքով շատ բան հասկըցոր:

Ինչ որ փոքր է նէ փոքր է. բայց միշտ հաստատրիմ ըլլալը՝ նաև պինտ փոքր բաներուն մէջ, մեծ բան մըն է:

ԳԼԽԷ ԼԱԿՈՒՄԺԱՅԻՆ ԿԱՍԱՏԱՏՈՒՄԻՆ:

Մենաբարին Մստուած ինչ որ իրօք կընէ, ան ընելու բանին համար՝ ի յաւիտենից իր ունեցած կամքը կըսուի ԼԱԿՈՒՄԺԱՅԻՆ ԿԱՍԱՏԱՏՈՒՄԻՆ: Քանզի Մստուած ամէն բան գիտութիւնով կընէ, ան բանը ընելու համար առաջուց դիտաւորութիւն ունենալով: Պիպուածով կամ առանց դիտաւորութեան բան մը չընել, այլ իր ըրած ամէն բան նախասահմանած է ընելու:

Կա ուրեմն թէ որ կըբաղձամբ գիտնալու թէ Մստուած ինչ ընել նախասահմանած է, պէտք է միայն նայիմք թէ իրօք ինչ կընէ: Եւ թէ որ կուզեմք գիտնալ թէ իր նախասահմանածը ինչ բան է եղեր, պէտք է միայն հարցունեմք թէ իրօք ինչ կայ կամ եղած է:

Բայց հոս տեղ չմոռնանք զգուշութեամբ որոշելու մէկզմէկէ աս երկու բաները, այսինքն՝ ան բանը որ Մստուած ինքը կընէ, և ան բանը որ ուրիշ էակներուն թող կուտայ ընելու: Մստուած ինքը չմեղանչելու կամ բնաւ մէկ արարածի մը մեղանչելուն պատճառ չըլլար, և սակայն իրենց ազատ կամքին կըթողու մարդիկ և գետերը որ մեղանչեն: Մստուած չհաճիր անոնց մեղանչելը, բայց սակայն իր ինքնիշխան կամայցը համեմատ աւելի կընտրէ թող տալու անոնց որ մեղք գործեն, քան թէ իր անհուն կարողութեամբ անոնց էութիւնը ոչնչացունելու, կամ անոնց խեղճ տունելու:

«Տայանի է Տէրօջ իր գործքերը աշխարհիս սկիզբէն հետէ»։ Գարծ. ԺԵ. 18: Մստուած ամենագէտ է, և միշտն վայրկենի մէջ կըտեսնէ թէ անցածը թէ ներկան և թէ գալիքը ամէն բան յաւիտեանս յաւիտենից: Բնաւ մէկ բան մը պատահած չէ որ ինքը աշխարհիս ըլլալէն առաջ չգիտնայ: Եւ բնաւ երբեք մէկ բան մը պատահելու չէ, հիմա և յաւիտեան, որ ինքը հիմա չտեսներ: Ո՞վ կրնայ արգիլել կամ փոխել Մստուածոյ դիտաւորութեանց մէկը: Ինքը կարող է ամէն բան ընելու. արարածներուն ամէն ալ անհրաժեշտ կոխում ունին իրմէն, վասն զի ինքը ստեղծեց զանոնք. ինքը կըպահպանէ անոնց էութիւնը. ինքը կուտայ անոնց բոլոր զօրութիւնը: Արարածները բան մը չունին որ Մստուածմէ ընդունած չեն, և բնաւ բան մը չեն կրնար ընել որ Մստուած իրենց զօրութիւն տուած չէ ան բանը ընելու, այլ ամէն իրենց ունեցածը՝ ընդունածը և ըրածը Մստուածմէն: Եւ քանզի Մստուած ամէն բանի նախատես է, վասնորոյ արարածները բնաւ բան մը չեն կրնար ընել որ Մստուած առաջուց չէր տեսներ անոնց ընելու բանը և որոշել թող տալու անոնց որ ան բանը ընեն: Թէ որ աս ասանկ եղած չըլլար, անատներ կարելի էր որ Մստուածոյ գաղափարները փոխուէին կամ արգիլուէին: Թէ որ Մստուած կարող չըլլար իր

արարածներուն շարժմունքը իր ուղածին պէս կառավարելու, և այնպէս իր չուզածը ընկէն արգիլելու զանոնք, կամ թէ որ ինքը կարող չըլլար առաջուց գիտնալու իր արարածներուն շարժմունքը և այնպէս իրեն հաճելի չեղածը արգիլելու համար միջոցներ բանեցունելու, անստեղծ կարելի է որ Մատուած իր ուղածին չկրնայ հասնիլ, որ իր կամքը չկրնայ կատարել և հետևաբար այլ ևս տիեզերքին ինքնիշխան թաղաւորը պիտի չըլլար: Բայց ո՛չ, ասանկ չէ. «Տէրը կը թաղաւորէ, և երկիրը թող ցնծայ»: Սաղմ. զէ. 1. «Ըն որ ի սկզբանէ անտի վախճանը կը տեսնէ և դեռ չեղած բաները ՚ի յաւիտենից գիտէ, կըսէ. Իմ խորհուրդս հաստատ պիտի մնայ, և ինչ որ կուզեմ ան կընեմ»: Եսայ. 46. 10: «Ըմեն ինչ որ Տէրը ուզեց՝ ըրաւ, և երկիրքին ու երկրին մէջը, ծովուն ու բոլոր խորունկ տեղերուն մէջը»: Սաղմ. ճլէ. 6: «Ընոր կամքը անփոփոխ է, և ո՛վ կրնայ փոխել զանիկայ, և իր սիրտը ինչ որ կուզէ ան բանը կընէ»: Յակ. 1. 13: «Ես պիտի ընեմ, և ո՛վ կրնայ դարձունել զանիկայ»: Եսայ. 46. 13: «Ընիկայ երկնից զօրութեանը մէջ ու երկրի բնակիչներուն մէջ իր ուղածին պէս կընէ, և մէկը չկայ որ անոր ձեռքին արգելք ըլլայ, կամ ըսէ անոր՝ Ընչ կընես»: Վախ. 7. 35: Սատանան՝ Մատուած իրեն ըրած թոյլտուութենէն տուել բան մը չկրնար ընել: Տէն Եսայ. 46. 10: «Երբեք Մատուած իր ինքնիշխան կամքը թոյլտուութիւն կուտայ Սատանային որ ընէ իր ամեն ընկելու բաները, չէ թէ անոր համար որ կը հաճի Մատուած անոր ըրածին (քանզի Մատուած կառէ անոր ըրածները, և յաւիտենական պատիւ պիտի տայ անոր իր ըրածներուն համար) հապա անոր համար որ ինքը խմտաւոր և բարի պատճառներ ունի ան բանը ընելու համար անոր թոյլտուութիւն տալու:

Վիմանապէս Մատուած կը կառավարէ մարդոց շարժմունքները, թէպէտեւ նոյն ատենը մարդիկ կատարեալ ազատ են իրենց ուղածը ընելու: Ըն կրնայ իր ուղածին պէս կառավարել մարդոց խորհուրդները և սիրտերը: «Թաւազաւորին սիրտը ջուրի սառուններու պէս է Տէրոջը ձեռքին մէջը, որ կողմը որ ուզէ նէ կը դարձունէ զանիկայ»: Եսայ. 46. 1: Զեմք գիտեր թէ Մատուած ինտոր կընէ աս բանը և նոյն ատենը մարդիկ ալ ազատ կը մնան. միայն թէ գիտեմք որ ասանկ է: Վանդի նախ՝ կը լրջամբ որ մենք ազատ կամք ունեցողներ եմք. և երկրորդ՝ Մատուած հիմա ասանկ կը վարուի մեր հետը. ու երրորդ՝ ամեն մարդ իր և ազատ կամքի տէր պիտի դառնար վերջին օրը: Բայց նոյն ատենը որ մարդս ազատ է, Մատուած կրնայ գործածել զանիկայ իր նպատակները կատարելու համար: Ըն նոյն ատենը որ անոնք ամենեւին չեն մտածեր իր վրայով, և միայն իրենց սրտերուն ցանկութիւնները լեցունելու ետեւէ են, զանոնք ձեռք կ'առնէ

և իրեն համար գործ մը ընել կուտայ: Եսայ. 46. 1: «Ընից մեղքերը պատժելու համար՝ Մատուած անոնց դէմ հանեց Երթեստանի թաւաորը (Տէն Դ թաւ. Ժ թ զԼ.) որ անոնց քաղաքները աւերէ և գերութեան տանի ժողովորդը: Մատուած իր ձեռքին մէջ բռնած տապարը և սղոցը, դաւաղանը և ցուպը կանուանէ ան թաղաւորը, և սակայն կը պատժէ զանիկայ շրէից աղջին դէմ ըրած բաներուն համար. քանզի ան բաները չըրաւ զՄատուած հաճեցունելու համար, հապա ինքը հպարտ և անգութ էր, ու միայն իր անձին մեծութիւնը կը փնտռէր: Կարգա Եսայ. 7. 12—15: Ըսանկ ալ սահմանուած էր և շատ դարեր առաջ գուշակուած էր թէ ամենօրհնեալ Փրկիչն մեր Յիսուս Վրիստոս, անօրէն մարդոց ձեռքը պիտի մատնուի և սպանուի: Մատուած նախաւ սահմանած էր Վրիստոսի մահը՝ և թէ ինչ կերպով պիտի կատարուի ան և ինչ պարագաներով. սակայն Յուդան՝ շրէից և Լուսիմայիցիք, ամեն ալ իրենց ազատ կամքը կատարելին ան գործը: Ինտոր որ Պետրոս կըսէ շրէից. «Ընիկայ Մատուած խորհուրդը և առաջուց գիտնալով սահմանուած ըլլալով, անօրէն ձեռքը մատնուած՝ փայտի վրայ դաւելով սպաննեցիք»: Վախ. 7. 23: Եւ դարձեալ, «Յիսուսի աս քաղաքին մէջը ժողովեցան քու Սուրբ Արքայդ Յիսուսին վրայ՝ որ ան դուն օծեցիր, շրէիցէսը և Պոնտացի Պիղատոսը շեմանոսներով ու Խորայէլի ժողովորդներով, ընել՝ ինչ որ քու ձեռքդ և կամքդ սահմանեց առաջուց որ ըլլայ»: Վախ. 7. 27, 28: Երբ թէ որ Յուդան կամք ունեցած չըլլար մտանելու զՎրիստոս, կամ քահանայապետները կամք ունեցած չըլլային զանիկայ կապելու և Պիղատոսին ձեռքը տալու, կամ թէ որ վերջապէս Պիղատոս հաստատ կամք ունենար զանիկայ ազատելու, ան դիպումը պատահած պիտի չըլլար: Բայց անոնք ամեն ալ իրենց ազատ կամքով աս բաները ըրին, և այսպէս՝ իրենց անօրէն ձեռքերով կատարեցին Մատուած նախասահմանած բանը: Սուրբ Վրոց մէջ շատ բաներ կանխադրուած և խոստացուած են, որոնց ամեն ալ կատարեցին մարդիկ իրենց ազատ կամքէն շարժուած: Ըհա ասանկ եղաւ Յովսէփին Նիքիպոս ծախուիլը. ասանկ եղաւ նաեւ Խորայէլացոց 400 տարի հոն մնալը, և Սովսէսի ձեռք մեծամեծ հրաշքներով դուրս հանուիլը. քանզի Փարաւոն ազատօրէն ըրաւ ան ամեն բաները որ Մատուած Սովսէսին ըսեր էր թէ պիտի ընէ: Սէկ ուրիշ օրինակ մըն ալ թող բաւական ըլլայ աս նիւթին:

Երբ որ թաղաւորութեանց իմ գլուխը կը կարգաւթ թէ Սիքիպոս Մատուած մարգարէն, Խորայէլի թաղաւորին՝ Երայի մարգարէացաւ թէ պատերազմին մէջ պիտի մեռնի: Սուտի թաղաւորը փոխեց իր կերպարանքը որ պատերազմին

մէջ զինքը չճանչնան: Ըստրեստանցիք երբոր տեսան Յովսափաթ Յուդայի թագաւորը, իր թագաւորական կառքին մէջ նստած, կարծեցին թէ Լ. քապէ, և կողքին սպաննել զանկայ, բայց իմանալով անոր ով ըլլալը, չսպաննեցին: Իսկ մէկ մարդ մը որ չէր ճանաչեր Լ. քապէ, իր աղեղը յարձակեց ըստ պատահման և զարկաւ զԼ. քապէ և նետը անոր վրասն իր կապերուն մէջէն մտնելով, նոյն տեղը մեռաւ Լ. քապէ, և Ըստուածոյ խօսքը կատարեցաւ: Հաւար. 34, 37: Ուստի թէ որ ան մարդը ճիշդ ան նոյն տեղեր կամք չունենար իր նետը արձակելու, և թէ որ Լ. քապէ ճիշդ ան կեցած տեղը չըլլար, կամ թէ որ նետը քիչ մը բարձրէն կամ քիչ մը ցածէն երթար, թէ որ մէկ կողմէն կամ մէկալ կողմէն անցներ, Լ. քապէ պիտի չսպանուէր: Բայց Ըստուածային Վախանաւորութիւնը կարգի դրաւ աս ամենը, և այսպէս Ըստուածոյ նախասահմանածը կատարեցաւ մարդուն ազատ ձեռքը:

Ուստի Ըստուած թող տալով մարդոց որ իրենց ուզածը ընեն, և անոնք աղատ կամքով գործելով, ինքք արդարապէս կրպատէ զանոնք, երբոր կրնան: Եւ սակայն որովհետեւ ինքք գիտէ թէ մարդիկ ինչ ընթացքով պիտի շարժին մասնաւոր պարագաներու մէջ, ինքք կրնայ անանկ կարգադրելու պարագաները, որ անոնք ան կերպով գործեն որ ինքք առաջուց ըսած է և սահմանած է: Ինքք անոնց մեղք գործել չտար, միայն թէ կրկնով թող տալ անոնց որ մեղք գործեն, թէ և նոյն տեղեր գիտէ թէ անոնք պիտի մեղանչեն: Ըսանկալ Ըստուած՝ դեռ Լ. քապէ նախահայրը չստեղծած, գիտէր թէ Լ. քապէ իր ստեղծութիւնէն ետեւ արգելալ պտուղէն պիտի ուտէ և մեռնի. այսու ամենայնիւ ստեղծեց զանկայ, դրաւ զբախտին մէջը և պատուիրեց անոր չուտել ան ծառէն. բայց Լ. քապէ կերաւ: Ըստուած առաջուց գիտէր ասիկայ, և նախասահմանած էր թող տալու անոր որ իր հրամանին դէմ ան պտուղը ուտէ: Ըստ մտքի և ոչ ուրիշ մարդով կրնամք ըսել թէ Ըստուած նախասահմանած է մեղքին ըլլալը աշխարհիս մէջ:

Ըստուած այնպէս սահմանադրած է որ մարդիկ եթէ չզղջան և չհեռանան իրենց մեղքէն ու Վրիստոսի չհաւատան յաւիտեան պիտի կորստին: Ըստուած չստիպեր մէկը որ մեղք գործէ, այլ ինքք իր ինքնակամ ընտրութեամբը ոմանք կը թողու իրենց մեղանչական վիճակին մէջը մնալու, և ոմանց ալ իր ձրի շնորհքը կուտայ որ զղջան և վերկուին: Մարդիկ թէ որ իրենց կամայքը մնան, ամեն ալ կուղեն մեղք գործել, բայց ոմանց իր Ուրբ Զոգին կուտայ որ անոնց սիրտը փոխէ մեղքը աստիճան: Ուրբ Գրոց մէջ շատ տեղ յայտնուած է աս բանը: «Վասն զի անոր (Վրիստոսի) շնորհքով վերկուած էք դուք հաւատքով. և աս չէ թէ ձեզմէ է, հապա Ըստուածոյ պարգէն է»: Լ.

Քէ. 8: «Թէ որ մէկ մարդ մը նորէն չճանչի, չկրնար Ըստուածոյ թագաւորութիւնը տեսնել»: Յով. 3: Բայց անոնք որ նորէն ծնած են Զոգիէն ծնած են: Հաւար. 6: Ուրեմն փրկուողները միայն անոնք են, որոնց որ Ըստուած իր Ուրբ Զոգին կուտայ: Ըստուած կըսէ. «Ոչէ նոր սիրտ մը պիտի տամ ձեզի, և նոր հոգի մը պիտի դնեմ ձեր մէջը, և ձեր մարմիններէն պիտի հանեմ քարեղէն սիրտը, և մարմնեղէն սիրտ մը պիտի տամ ձեզի: Եւ իմ հոգիս ձեր մէջը պիտի դնեմ, և պիտի ընեմ որ իմ օրէնքներու մէջ քայլէք, և իմ իրաւունքներս պահէք և զանոնք կատարէք»: Եւ. 36, 27: Թէ աս և թէ ուրիշ շատ վկայութեանց մէջ յայտնի կըսուի մեղքի թէ ինչու Ըստուածոյ ժողովուրդը անոր իրաւունքները կրպահեն և անոր օրէնքներուն մէջ կը քայլեն. քանզի Ըստուած իր Զոգին կը դնէ անոնց մէջը, և նոր սիրտ մը կուտայ անոնց, և իրեն կը շնազանգեցունէ: Ուրիշները աղատ կամքովն այնպէս կուղեն որ չճանաչան, վասն որոյ կը կորսուին: Բայց Ըստուած իր զօրութիւնովը յօժար սիրտ մը կուտայ իր ժողովուրդին իր կամքը կատարելու: Սաւ. 27, 3:

Ուստի Ըստուած միշտ իր ըրած բաները առաջուց սահմանած է ընելու, անոնք որ կը փրկէ առաջուց սահմանած է փրկելու: «Ըն ամենը որ Զայր ինծի կուտայ՝ ինծի պիտի գայ»: Իրեն իշխանութիւն տուիր բոլոր մարմիններուն վրայ, որպէս զի ան ամենուն որ իրեն տուիր՝ ինքք յաւիտեանական կեանք տայ անոնց»: Յով. 37, 2: «Իմա ես անոնց համար կաղաչեմ, ու չէ թէ աշխարհի համար կաղաչեմ. հապա անոնց համար՝ որոնք դուն ինծի տուիր, ինչու որ քու կը են անոնք»: Հաւար. 9: «Ով Զայր՝ անոնք որ դուն ինծի տուիր, կուղեմ որ ուր որ ես եմ՝ անոնք ալ իմ հետս ըլլան, որ իմ փառքս տեսնեն որ ան ինծի տուիր. ինչու որ դուն զիս սիրեցիր աշխարհը ըլլալէն առաջ»: Հաւար. 24: «Ինչու որ կանչուածները շատ են, ու ընտրուածները քիչ»: Սաւ. 14: «Ինչու որ անոնք որ առաջ կը ճանչնար՝ առաջուց ալ հրաւիրեց իր Որբոյն պատկերին կերպարանակից ըլլալու: . . . Եւ որոնք որ անոնք որ կանչեց՝ նաեւ արգարացուց անոնք», Լաւ. 29, 30: «() Ընեալ է Ըստուած՝ և մեր հետքը Յիսուս Վրիստոսի Զայրը. ան որ մեղ օրհնեց ամեն Զոգեւոր օրհնութիւններով երկիրքին մէջ Վրիստոսի ձեռքովը. ինչպէս որ մեղ անոր ձեռքովը աշխարհը ըլլալէն առաջ ընտրեց, որ մենք սուրբ և անարատ ըլլանք անոր առջեւ սիրով, առաջուց ինքք մեզ սահմանեց իրեն որդեգիր ըլլալու Յիսուս Վրիստոսի ձեռքովը՝ իր կամքին ուղեւորով»: Լաւ. 3—5: Տէս նաեւ 10 և 11: Ըհա աս վկայութիւնները և ասոնց պէս

ուրիշ շատ վկայութիւններ կըսորվեցունեն՝ թէ (Մատեօյ) ժողովուրդը Վրիստոսի տրուած են աշխարհը ըլլալէն առաջ . կըսորվեցունեն՝ թէ Մատեօն նախասահմանեց զանոնք սուրբ ըլլալու և Վրիստոսով փրկութիւն գտնելու :

Բայց սա ըսելովն թող չհմացուի թէ Մատեօն մեկաշնորդ կարգիլէ հաւատքի գալէն . հապա անոնք չեն ուզեր հաւատաւ ինչու որ իրենց սրտերը չար են : Թէ որ անոնք զոջան ու հաւատան Վրիստոսի պիտի փրկուին , բայց իրենց չարութեամբ չեն ուզեր զոջալ և հաւատալ : Եւ չէ թէ Մատեօն կարգիլէ զանոնք դարձի գալէն , միայն թէ կըթողու զանոնք իրենց չարութեանը մէջ որ այնպէս պիտի կորսուին :

Ոմանք՝ քրիստոնեայ աղգաց մէջ կըծնանին , Մատեօյ խօսքը կըսորվին , Մատեօյ չօգիտու կընորոգուին , մեղքը կըթողուն և կըփրկուին : Ուրիշները չեթանոսաց մէջ կըծնանին , բնաւ չօգուով Սրբով չեն նորոգուիր , միշտ կըմեղանան և մեղքը կըսիրեն , և կըկորսուին : Եւ մանապէս բուն քրիստոնեայ ըսուողներուն մէջն ալ՝ ոմանք մտիկ կընեն Մատեօյ խօսքին , կըզոջան , կըհաւատան , կըհաղանգին և կեանքը կըգտնեն : Ուրիշները մեղքը կըսիրեն , Մատեօյ պատուիրաններուն չեն հնազանդիր , չօգուին Սրբոյ դէմ կրկենան , և Մատեօն կըթողու զանոնք որ մեղաց մէջ մնան և յաւիտեանակա օտանջանքը երթան : Ինչո՞ւ Մատեօն առ տարրերութիւնը կընէ մարդոց մէջը . ինչո՞ւ ոմանց իր շնորհքը կուտայ և այնպէս անոնք կըփրկուին , և ոմանց իր շնորհքը չտար և այնպէս անոնք կըկորսուին . սա բանը մեք չեմք գիտեր , միայն գիտեմք և կըտեսնեմք որ Մատեօն այսպէս կընէ : Ինքը անանկ ընելուն համար անշուշտ՝ աղէկ պատճառներ պիտի ունենայ , բայց անոնք մեր խելքէն դուրս բաներ են :

Բայց պէտք է յիշենք որ չկայ մէկ փրկուելու ընտրուած որ նոյն ատենը ընտրուած չըլլայ նաև սուրբ ըլլալու : Մատեօն կընախասահմանէ իր ժողովուրդը իր Որդւոյն պատկերին կերպարանակից ըլլալու (Հով. 29.) և սուրբ ու անարատ ըլլալու անոր առջեւը սիրով : (Գլ. 1. 10. 4) : Եւ ինչո՞ք որ մեղքի մէջ կըմնան պիտի չփրկուին : Ուրեմն մէկ մարդ մը կընայ գիտնալ՝ թէ արդեօք ինքը ընտրուած է փրկուելու , ինքզինքը քննելով թէ արդեօք սուրբ է : Որչափ որ մէկ մարդ մը հաստատ գիտնայ թէ ինքը իրօք կըսիրէ զՄատեօն , կըհաւատայ Վրիստոսի , կըզոջայ մեղքը , կատէ զանիկայ և կըջանայ միշտ անկէջ հեռանալու և սուրբ ըլլալու , նոյնչափ հաստատ կըգիտնայ թէ ինքը ընտրուածն էրէն մէկն է : Սակայն թէ որ մէկը մեղքը կըսիրէ , միշտ մեղք կըդործէ , բնաւ պատճառ մը չունի մտածելու թէ ինքը ընտ-

րուածներէն մէկն է : Կարելի է որ ընտրուած ըլլայ , և Մատեօն գուցէ ետքը զանիկայ զոջման բերէ , բայց մէկը չգիտեր թէ ասանկ պիտի ըլլայ արդեօք . և թէ որ ան մարդը մեղքին մէջը մեռնելու ըլլայ , անատենը սաոյգ է որ ասանկ չէ եղեր :

Եւ անկէ նէ մէկ մեղաւոր մը կընայ գիտնալ թէ պիտի փրկուի արդեօք . այո՛ . թէ որ զոջայ , հաւատայ Վրիստոսի և մեղքը առէ , անտարակոյս պիտի փրկուի , եթէ ո՛չ՝ անտարակոյս պիտի դատապարտուի : Թէ որ անիկայ ընտրուած մըն է , պիտի ընէ սա բանը , այսինքն պիտի զոջայ և Վրիստոսի հաւատայ ու փրկուի , իսկ թէ որ ընտրուած չէ նէ պիտի չընէ սա բանը , և պիտի կորսուի յաւիտեան : Եւ թէ մէկը ճշմարիտ փափաք ունի փրկութեան և լեւտարանին ճամբովը կըփնտէ զանիկայ , անշուշտ պիտի գտնէ . ահա ասանկ ընողն է ընտրուածը : Իսկ թող մէկը չխաբէ ինքզինքը և կարծէ թէ պիտի փրկուի որ ատեն մեղաց մէջ կըջարունակէ կարծելով թէ ինքը մէկ ընտրուած մըն է : Բայց անոնք որ ընտրուած են փրկուելու , ընտրուած են չօգիլին սրբելով՝ ու ճշմարտութեան հաւատքով , չէ թէ մեղքով և մոլորութիւնով : Թ. Թ. 12 :

Սիր փրկութիւնը բոլորովն Մատեօն է անանկ կերպով մը որ մէկը չընար պարծենալ . բայց նոյն ատենը մեղմ ալ անանկ կախում մը ունի , որ եթէ ուզեմք փրկուիլ պէտք չէ որ ծոյլ ըլլանք կամ մեղքի մէջ մնանք : Եւ չով ուզողով պարտիմք անձերնուս փրկութիւնը գործել . վասն զի Մատեօն է որ մեր մէջը կըյաջողէ կամքը ու ընելը իր հաճութեանը համար : Փիլ. 1. 12, 13 : Չեմք կընար կատարելապէս իմանալ սա խօսքս , այսու ամենայնիւ ամէն ճշմարիտ քրիստոնեայ քիչ շատ կըհասկընայ զանիկայ . բանղի գիտէ թէ առանց Մատեօյ չօգուին օգնութեանը բան մը չընար ընել , և սակայն գիտէ թէ ինքն ալ պարտի աշխատիլ , ջանալ , միշտ հսկել , աղօթել և մարտնչիլ :

Ճշմարիտ քրիստոնեաները որ ընտրուած են փրկուելու , ինքնիրեննուն պարծենալու պատճառ մը չունին , այլ շատ պատճառ ունին շնորհակալ ըլլալու : Վասնիկ Մատեօն ուրիշներէն աւելի անոնց վրայ ողորմութիւն ունենալուն համար է որ կըփրկուին , չէ թէ անոր համար է որ անոնք աւելի արժանաւոր են : “Չէ թէ արգարութեան գործերէն որ մենք ըրինք , հապա իր ողորմութիւնով մեզ փրկեց” : Տէ. Գ. 5 : “Ինչպէս որ մեզ անոր (Վրիստոսի) ձեռքովը աշխարհը ըլլալէն առաջ ընտրեց , որ մենք սուրբ ու անարատ ըլլանք անոր առջեւը սիրով . առաջուց ինքը մեզ սահմանեց իրեն օրդեպի ըլլալու , Յիսուս Վրիստոսի ձեռքովը իր կամքին ուզելովը” , (Գլ. 1. 10. 4, 5.) որուն կրկնովէ բոլոր փառքը . ամէն :

Համարացիւոյ դարձնելն:

Չէ՞ք մի գիտեր՝ որ ձեր մարմնները տաճար են Սուրբ
Հոգիին որ ձեր մէջն է: Եւ Սորենթ. Գ. 19:

Եւ խօսքիս վրայ՝ Սարտինոս լուտեր՝ Վեր-
մանացի աստուածաբանը ասանկ խոր-
հրդածութիւն կընէ. «Եւ ի՞նչ փառաւոր
խորհուրդ, որ մենք մեղաւորներս, էջիսու-
սի Վրիստոսի հաւատարմով, ու անոր Սար-
մինը ճաշակելով, զանիկայ՝ բոլոր իրեն զ-
րութեամբը, իմաստութեամբը ու արգա-
րութեամբը մեր մէջը կունենա ք, ինչպէս
որ գրուած է. Ով որ կը հաւատայ, Վրիս-
տոս անոր ներքի զին կը բնակի: Եւ Եւ. Գ. 17:
Ով սքանչելի բնակարանն է զարմա-
նալի վրան, որ քան զ՝Նովսէսինը գերազոյն
է, և ներքուստ բոլորովին զարդարուած է
մեծ վայելչութեամբ մը, երեւելի խորգե-
րով, կարմիր վարագուրներով և ոսկեղէն
կարասիքներով. բայց արտաքուստ ուրիշ
բան չերեւար, միայն թէ խոյի կամ այծի
մորթերու անդարդ երեւոյթ մը, ինչպէս որ
Սինայի անապատին մէջը՝ Լստուծոյ շինե-
լուած վրանին վրայ կերեւար: Եւ Եւ. Գ. 7, 14:
Վանդի շատ հեղ բրիստոնեաները
կը գլորին. ու թէ որ անոնց արտաքին երե-
ւոյթը միայն զննելու ըլլաս, տկար ու անարդ
բան մը կերեւան. բայց պէտք չէ յուսահա-
տիլ. վասն զի ան տկարութեան ու յիմա-
րութեան մէջը՝ այնպիսի գաղտնի զօրութիւն
մը կը բնակի, որ աշխարհս զանիկայ չընար
ճանչնալ. սակայն ան զօրութիւնը աշ-
խարհիս կը պալթէ. քանզի Վրիստոս կը
բնակի անոնց մէջը: Եւ երբեմն անանկ քը-
րիստոնեաներ տեսայ, որ կաղալով կը քա-
լէին, ու շատ տկար կերեւային. բայց եր-
բոր պատերազմելու ու աշխարհի երեւնալու
ժամերին հասաւ, իսկոյն Վրիստոս զա-
նոնք շարժեց, ու այնպիսի ոյժ ու քաջու-
թիւն մը ստացան, որ սատանան զարհու-
րելով անոնց առջեւն կը փախէին»:

Ով որ կը վախայ Լստուծոյ կամքը կտրե-
լէն, կրնայ վստահ ըլլալ թէ իր հաւատքը և
զըջումը ճշմարիտ են: Հանգստութիւնը կրնայ
ըլլալ պատրուական, ցնծութիւնը սուտ երեւոյթ
մը, և խաղաղութիւնը միայն շողոքորթութիւն
մը. բայց սակայն մեղքին սոսկումը և ատելու-
թիւնը չընար ըլլալ կեղծ պատրանք մը:

Լստուծոյն քաղաք և հարստութեան
քաղաք:

Գիտուն և պերճախօսն սուրբ Զօհան
Ոսկեբերան, գեղեցիկ գաղափար մը կաւա-
ջարկէ մեզի ցուցնելու համար, թէ աղքա-
տութիւնը հարստութեանն աւելի օգտակար
է: Եւ ինչպէս երկու քաղաքներ կը ցուցնէ մե-
զի, որոնց մէկուն մէջը միայն հարուստները
կը բնակին, իսկ մէկաւն մէջը՝ միայն աղ-
քաւորները. ապա կըսկսի քննել թէ աս քա-
ղաքներէն ո՞րը աւելի զօրաւոր է:

Թէ որ հարցնելու ըլլանք մարդոց մեծ
մասին, անշուշտ պիտի պատասխանեն ա-
նոնք, թէ հարուստներուն քաղաքը զօրաւոր
է և կրնայ յաղթել մէկաւն: Եւ այս Ոսկե-
բերան կը հետեւցունէ թէ աղքատներուն
քաղաքը յաղթող պիտի ըլլայ. և իր խօս-
քը աս պատճառով կը հաստատէ, թէ աս
հարուստներուն քաղաքը՝ շատ գեղեցիկ և
փառաւոր է, բայց ոյժ չունի, և զուրկ է
հաստատուն ապահովութենէ. առատու-
թիւնը՝ որ թշնամի է աշխատութեան,
չընար բարեխառն ըլլալ, և հետեւաբար
միշտ հեշտութիւն և փափկութիւն փնտը-
ւելու հետեւելով, մարդոց բարքը կը խան-
գարէ, և անոնց քաջութիւնը՝ գեղեսու-
թեամբ, հպարտութեամբ և անգործու-
թեամբ կը թուլցնէ. ասանկով արհեստ-
ներուն հոգ տանող չըլլար, երկիրը աղէկ
չմշակուիր, աշխատալի գործերը՝ որոնց
մով մարդկային ազգը կը պահպանուի, բո-
լորովին երեսի վրայ կը մնան. և աս մեծա-
շուք քաղաքը, ուրիշ թշնամիներու պէտք
չունենար, վերջապէս ինք իրմէն կը կոր-
ծանի ու աւերակ կը դառնայ իր հարստու-
թեամբը:

Լսոր հակառակ՝ մէկալ քաղաքն մէջ,
ուր տեղ միայն աղքատները կը բնակին,
հնարագէտ հարկաւորութիւնը՝ որ ճարտար
գիւտերով բեղնաւոր է և մայր շահաւոր
արհեստներու, կըստիպէ որ ամէն մարդ
բանի մը պարտալի, ուսմունքով կըսրէ ա-
նոնց միտքերը, ու համբերութեան կը թե-
լով զանոնք, այրական ոյժ մը կուտայ ա-
նոնց, ու քրտինք չնայելով՝ գլուխ կը տա-
նի ան մեծամեծ գործերը, որոնք հարկաւ
մեծ աշխատութիւն կը պահանջեն:

Պօպէ:

1 Պիւրէիլի:

Որոշումներն իրարեւորելու ։

Կոկորդիլոսի որսորդները գետերուն ծան-
ծաղուտ՝ տեղումները կրկնում են զանի-
կայ . ուր տեղ կ'որդիլոսը կը պառկի ու
ընուն մէջը տաքնալու ։ Արբոր որսորդնե-
րուն նաւակը կը մօտենայ՝ ջուրը կը քաշուի ,
բայց շատ հեռու չերթար . ուստի որսորդ-
ները կամայ կամայ առաջ կը տանին նաւը ,
և կոկորդիլոսի շնչառութենէն ջուրին երե-
սը տեսնուած պղպջակները դիտելով շու-
տով կիմանան անոր ուր ըլլալը . և իրենց
առաջուց պատրաստած երկժանիք՝ կամայ
կամայ ջուրը կը ձգեն որ կենդանիին զըպ-
ցունելով անոր ուր ըլլալը աղէկ իմանան ։
Կոկորդիլոսը շատ դանդաղ ըլլալուն , երբոր
երկաթը իրեն կը գոյժ՝ բնաւ հոգ չընէր , և
այսպէս անոնք վեր կը քաշին երկաթը , և
առանց դժուարութեան անոր կռնակը կը
խտլեն ։ Կենդանին ջուրին մէջ կը սկսի շար-
ժիլ , բայց բնաւ նաւակին չգտնէր , թէ
տէտե մէկ անգամ մը իր պոչովը զարնելով
կրնայ նաւը ընկղմել ։ Ինչեւիցէ շատ ան-
գամ երկժանիք կը թօթի վրայէն , բայց
ասոր վրայ կատաղածութիւն մը չգուցընէր
ոչ ալ երկիւղ մը , այլ թող կուտայ ,
ինչպէս որ ես տեսած եմ , որ նորէն զարնեն
իրեն մինչև որ բռնուի և ցամաքը քաշուի ։
Ինչտոնք սոսկալի կատաղութեամբ բերա-
նը կը բանայ որ հոն գտնուողները խածնէ ,
բայց մէկ մեծ պամպու մը խօթուելով իր
բերանը՝ անոնկ ուժով կը խամսէ զանիկայ
որ չկրնար շուտով իր ակռաները պամ-
պուն մէջէն հանել , և նոյն միջոցին որ-
սորդները չուանով մը ծնօտը կը կապեն ։ Ին-
չեւիցէ ետքը կենդանին ալ վնաս մը չկրնար
ընել ։ Այլ իր ջապէս կոկորդիլոսը գրեթէ
անդգայ կենդանի մըն է , և ունեցած մեծ
ուժին՝ պոչին սոսկալի զօրութեանը , ակռա-
ներուն և ծնօտին նայելով , քաջ և կատա-
ղի կենդանի մը սեպուելու չէ ։

Ինչ կարծիքը թէ կոկորդիլոսի մորթը
շատ կարծր է , վերի պատմութենէն յայտ-
նի է որ չափազանցութիւն մըն է ։ Երբ
ամենայնիւ տեսած եմ անոնկ կոկորդիլո-
սներ որ խիստ արագութեամբ կը շարժին , և
անշուշտ ձուկի ետեւէ ինկած ատենին շատ

արագ կերթան . երբեմն խորամանկութիւն
ալ կը բանեցունեն , որովհետեւ շատ ան-
գամ գետերուն մէջ բանուկ ձամբաներուն
վրայ պահուած կոկորդիլոսներ գտնուած
են ։

Սարկին ճանապարհորդ ։

Չնայ երբոր արեւն հասկի պահելու վերայ ։

Մ . Վաղէն վաղեմի քարոզիչը՝ Սդե-
քուէն գաւառին մէջ , (Կանդոնէն 500
փարսախ հեռու է) որ հիմա օտար եր-
կիրներ գացող քարոզչաց հոգաբարձունե-
րուն մէկն է , անգամ մը Չինաստանէն քա-
նի մը բաղի հաւկիթ ընդունեց , և կրակ
թէ՛ տարի մըն ալ կրնայ պահել ան հաւ-
կիթները առանց աւրուելու ։ Չինացիք
Վեյ-չան կանուանեն զանոնք , որ ըսել է ,
ծրարած հաւկիթներ . որոնց պահպանու-
թիւնը՝ աս կերպով կրնեն ։ Տասը հաւկիթի
համար $\frac{1}{3}$ լիթր նոճիկ կամ բակլայի արմա-
տին մոխիրը կառնեն (ոմանք աս մոխիրին
տեղը փոքր քործկածեն) $\frac{1}{3}$ լիթր կ'ըրի փո-
շի , և 60 գրամարի չափ խոշոր աղ ծեծ-
ուած ։ Երկու ամիսը կը լուծեն զօրեղ թէյի
մէջ , խմոր մը կը ընեն և անով կը ծեփեն
հաւկիթները մէկ կամ երկու գծաչափ
թանձրութեամբ . ետքը հոգէ ամանի մը
մէջ կը դնեն զանոնք , ու ամանին բերանը
աղէկ մը կը գոցեն ։ Տասնուհինգ օր անցնե-
լէն ետքը , թէ որ ուզեն կը հանեն անկից
հաւկիթները , թէ խելոյն ուտելու համար՝
առանց եփելու , և թէ իբրեւ ճամբու պա-
շար հետերնին տանելու համար ։

Գեորգ Ուաշինկիւն ։

Գեորգ Ուաշինկիւն Եմերիգայի պատու-
թեան հիմնադրին մարդ՝ բարեպաշտ և խոհեմ
կնիկ մըն էր , որ աղէկ հոգ կը տանէր իր զաւկին
բարեկրթութեանը ։ Էտապայ պատմութենէն
կիմանալով թէ ինչպէս գիտէր ան իր որդին գա-
տիարակելու կերպը ։

Եւ ընդարձակ արօտներուն մէջ որ իրենց աղ-
գատահիմն կալուածքներն էին , առողջ ձի մը կար
խիստ փայտեալարար , որուն փայ շատ սէր ու-
նէր Ուաշինկիւնի մայրը , անոր գեղեցկայար-
մար ձեւոյն և արագ ընթացքին համար ։ Գեւ մե-
կը հեծած չէր անոր փայ , և խիստ աներկիւղ
ու փարպետ ձի հեծող մարդիկը անգամ չէին
համարձակեր աս փորձը ընելու ։ Մէկ օր մը
Գեորգ միտքը դրաւ որ իրեն քանի մը բարեկամ

¹ Սուր :

² Օւլիգէն :

ներուն օգնութեամբը նուաճէ զանիկայ : Եւ ատա՛յնաբար թիւն կրելէն ետեւ , վերջապէս կրցան սանձ դնել ձիուն բերանը : Գէորգ իսկոյն ցաթկեց ճեճաւ վրան , և ահա կատաղի անասունը անմիջապէս սկսաւ սաստիկ արագութեամբ աս դին ան դին դաշտերուն մէջը վազել : Բայց Գէորգ ինքզինքը հաստատ բռնելով ձիուն վրայ , սանձը ամրոտեց , ծռեցաւ բաշին վրայ , և ուղեց որ ինչ կը լայնէ ըլլայ իր դիտաւորութիւնը գըլուխ տանի : Սոսկայի և յուսահատ գօտէմարտութիւն մըն էր ասիկայ . քանզի մէկը մէկալին անշուշտ յաղթելու կրջանար ու մէկն ալ բնաւ չէր ուզեր որ յաղթուի : Այլ երջապէս ձին՝ որ սրընթաց նետի մը պէս կերթար , ոտքը սահեցաւ իսկաւ , և իր մէկ երակը՝ ճաթելով անմիջապէս մեռաւ :

Գէորգ սիրտը կոտրած և շփոթած՝ աս աղնիւ անասունին մահուան տագնապը տեսնելէն ետեւ տունը դարձաւ , մտածելով թէ ինչ պատասխան տայ իր մօրը : Եւ խոստձաշիկին ատենը երբոր սեղան նստան , Տիկին Ուաշինկըն ըսաւ հոն գտնուող պատանիներուն . «Պարոններ՝ ձեր աս առտուան զբօսանքին ատենը իմ գեղեցիկ կարմրաբազըն ձիս տեսա՞ք արդեօք» : Եւսիկայ դժուարին հարցմունք մը չէր , բայց անոր պատասխանն էր դժուարութիւնը . ամէնքն ալ լուռ կեցան , և տիկինը նորէն հարցուց նոյն բանը : Եւ ատենը Գէորգ յայտնապէս ըսաւ թէ , «Բու կարմրագոյն ձիդ մեռաւ» : Ետքը մի ըստ միով պատմեց անոր աս դիպուածը :

Տիկին Ուաշինկըն հանդարտութեամբ և սիրալիր կերպով մը ըսաւ . «Կըցաւ իմ սիրելի ձիուն մեռնելուն վրայ , բայց շատ ուրախ եմ տեսնելով որ իմ զաւակս միշտ շիտակը կրողուցէ» : Երևելի պատասխան մըն էր աս , որով Գէորգ սորվեցաւ ճշմարտութեան՝ աղնիւ բաներէն աւելի յարգի ըլլալը :

Եւսիկայ ճամբորդութիւն իւր :

Պուկէնվիլ անուանի նաւորդը՝ մէկ օր մը ինչ ատեն սուրհանգակի կառքով փարիզու Եղիւսեան դաշտէն կանցնէր , իր մէկ բարեկամը տեսաւ որ կրպորտեր հոն զբօսանալու համար : Եւ միջապէս հրամայեց սուրհանգակին որ կառքը կեցուէ , իջաւ վար և ըսաւ անոր . «Բարի լոյս , բարեկամ . ահա ես Ալէքսայը կերթամ , եկուր իմ հետ ճաշէ» :

«Եւսիկայ է ատ բանը , պատասխան տուաւ ան , քանզի ուրիշին խօսք տուեր եմ» :

«Եւսիկայ , մեր բարեկամութեանը համար կաղաչեմ , հետս եկուր» :

Բարեկամը կէս մը համոզուած , կէս մը ստիպուած Պուկէնվիլի աղաչանքէն , վերջապէս հա-

ճութիւն տուաւ : Եւսիկայ Ալէքսայը որ հասանկաւ քաղաքին մէջէն անցաւ գնաց առանց կենալու :

«Բայց կարծեմ թէ , ըսաւ բարեկամը , Ալէքսայէն անցանք . զիս ո՞ր կրտանիս» :

«Կրտեսնեմ , ըսաւ Պուկէնվիլ , որ ալ ատենը չէ քեզի բան մը պահելու . այս ինչ քաղաքը պիտի երթամք մէկ ազգականիս տունը» : Եւ իսուքը բերելով տասը փարսախ հեռու քաղաքի մը առնունք տուաւ . բարեկամը իսկոյն սկսաւ բարկանալ և բարձրաձայն աղաղակել . բայց ինչ ընէ , հարկ եղաւ որ զիջանի : Երեք ժամ անցնելէն ետքը՝ ան ըսած տեղը հասան , կառքէն իջան և մըտան պանդոկի մը մէջ , չէ թէ ազգականին տունը :

«Սիրելի՛ բարեկամս , ըսաւ անտունը Պուկէնվիլ , մէկ ժամէն ետքը ես չափով պիտի երթամ , ասկից մինչև հոն քսան փարսախի չափ կայ . յուսամ որ դուն չես զատուիր իղմէ : Իրաւ գուն ոչ հանդերձ և ոչ ստակ ունիս հետդ , բայց ես առնոց ամէնն ալ ունիմ» :

«Եւսիկայ , ըսաւ միւսը , ատ փոքր ճամբորդութեանն ալ կը հաճիմ . բայց» . . .

Երկու բարեկամները ճամբայ եղան և իրենց երթալու տեղը հասան : Պուկէնվիլ արտորայ որ ցուցնէ անոր իր նաւը՝ որ պատրաստ կրկենար նաւահանգիստը : Եւ ալ ինչպէս որ իրաւունք ունէր , ուղեց երթալ նաւուն մէջը պարտիկ , նաւապետը հաճեցաւ աս բանիս . և անմիջապէս երկուքն ալ նաւը մտան : Եւ ատենը ըսաւ Պուկէնվիլ . «Բարեկամ , միայն ինծի կրպասէին ասոնք , ու հիմա խարիսխը պիտի վերցունեն : Ես ճամբորդութիւն մը պիտի ընեմ՝ աշխարհիս բոլորտիքը : Հետերնիս եկուր որ բովանդակ աշխարհը տեսնես . մի՛ հոգար բանի մը կարօտութիւն չես քաշեր» :

Հինգ վայրկեանէն ետքը նշան տուաւ և բարեկամը մեկնեցաւ անոր հետ , քանզի չէր կրնար անոր դէմ կենալ :

Երբ միթէ ասիկայ չէ՞ մարդոց մեծ մասին պատմութիւնը : Եւսիկայ անորին փորձութեանը դէմ չէն կենար , և կարծեն թէ շատ պիտի չնոսնան ու պիտի չերթան ուր որ չեն ուզեր երթալ : Բայց չարութեան ճամբան սահեցունող է . առջի քայլը կառնէ մարդ առանց մտածելու . ու ետքը կրսահի կերթայ անանկ որ ալ նար չէ կենալ : Ա՛նք անկումներուն կամ մեղքերուն առջին չառնուիր , բայց միայն արթուն կենալով և աղօթք ընելով , ան նոյն ատենը անգամ՝ որ փորձութիւնը պզտիկ բան մը կրթուի :

«Երբոր կըտկարանամ , անտանը կըլցրանամ» : Եւսիկայ . ԺԷ , 10 : Վրիստոնեան անտանը միայն զօրուոր է , երբոր կըլցայ թէ ինքը տկար է . երբոր կըլցայ թէ ինք իրմէն զօրութիւն չունի , ու Վրիստոնի դիմելով՝ անոյ կըլցորանայ :

Սուրբ Գիորգը կըլերկէ զիս իմ սրտիս , և իմ սիրտս աղէկ մը քննուելէն և գիտցուելէն ետեւ , դարձեալ կըլերկէ զիս Սուրբ Գիորգին , որ ան ատենը կարող կըլլամ անոր խօսքերը իմանալու :

Ճշմարտութեան ջատագովները կարօտ չեն բռնութիւն ընելու . քանզի ճշմարտութիւնը չվսիւնար մոլորութենէն , քանի որ աղատ է անոր հետ մարտնչելու : Ճշմարտութեան զէնքերը մարմն ու որ չեն , բայց հոգեւոր :

Թե որ ճշմարտութիւնը բարձրաձայն խոստովանուի , անշուշտ ճշմարտութիւնը յաղթական կը հանդիսանայ . նմանապէս թէ որ մոլորութիւնը առանց ծածկելու հրատարակուի , անսարակոյս մոլորութիւնը կը կորսուի :

Վրէստի Իսկոնդին ինչպիսիք են ոչ ինչպիսիք , իօրէնք են ոչ իսկիծք :

«Բայց ինտոր անտոնը ան որ մարմնոյ կողմանէ ծնած էր նե՛կ կը հալածէր զանկիայ որ Հոգիին կողմանէ էր , անանկ ալ հիմա» :
Վարդ . Գ . 29 :

Մարտեալին աս խօսքը Խամայէին համար է , որ մարմնոյ կողմանէ ծնած ըլլալով կը հալածէր Խասակը որ խոստովանէր ին որդին էր և Հոգիին կողմանէ ծնած էր : «Խասակով քեզի ցեղ պիտի բուռի» , և «Վառ զաւակովդ պիտի օրհնուին երկրի բոլոր ազգերը» : Ճննդ . Ին . 12 և ԻԲ . 18 : Վարդ . Գ . 25 : Հռովմ . Թ . 7 : «Ինտոր որ անտոնը» կըլէ Պօղոս , որ ըսել կուզէ , ինտոր որ Մարտեալին ատենը՝ անանկ ալ հիմա մարմնաւոր կը հալածէ զհոգեւորը :

Եւ արդեօք ինչո՞ւ ատոր հակառակը ըսուած չէ . ինչո՞ւ համար ըսուած չէ , թէ հոգեւորը կը հալածէ և պարտի հալածելը զմարմնաւորը , թէ ճշմարիտ եկեղեցին կը հալածէ և պարտի հալածել ու պատժել անհաւատ հերետիկոս և չար հայհոյիչները : Մարտեալ ասիկայ մէկ վսեմ խնդիր մըն է , և քննողութեան ու խորհրդածութեան արժանի :

Անգի կը թուի թէ աս հարցմունքին մէկ պատասխանը աս կրնայ ըլլալ , որ խոստովանէր որդիք չեն կրնար հալածել , պատժել , անիծել մարդիկը . վասն զի բուն ան խոստովանքը՝ որուն զաւակներն են իրենք , աս է թէ «Վառ զաւակովդ պիտի ՕՐՀՆՈՒՄԵՆ երկրի բոլոր ազգերը» :

Պօղոս աւարտեալ ևս՝ աս նոյն բանը կը հաստատէ ըսելով .
(ԲՏՆԵԿԵՐ ԵՄ ԵՄ ԵՄ ԵՄ) : Հռովմ . ԺԲ . 14 :

Հակովքոս առաքեալին ըսածն ալ ասիկայ է . «Բայց մարդոց լեզուն մէկը չկրնար հնազանդեցունել , ան չարք ու անկարգը և մահացու թոյնով լեցունը , անով կորհնէմք Տէրը ու Հայրը , և անով կանխենք մարդիկ որոնք Մատուցոյ նմանութեանը պէս ստեղծուած են . աննոյն բերնէն կըլին օրհնութիւն և անիծք . «ղայրներ» պէտք չէ որ ասիկայ ասանկ ըլլայ» :
Հակ . Գ . 8—10 :

Աւտի յայտնի է որ խոստովանէր որդին՝ Վրիստոսի ճշմարիտ եկեղեցին իրաւունք չունի անիծել մարդիկը , որչափ որ անզրամ չար մարդիկ ըլլան անոնք , իր պարտաւորութիւնը օրհնել է և ոչ անիծք կարգաւ մարդոց վրայ : Եւ թէ որ զինքը հալածեն ալ և նոյնին , իր պարտաւորութիւնն է չարին տեղը բարի հատուցանել . քանզի Վրիստոս կըսէ . «Սիրեցէք ձեր թշնամիները . օրհնեցէք ձեզ անիծողները , բարի ըրէք անոնց որ ձեզ կ'ատեն , և աղօթք ըրէք անոնց վրայ , որ ձեզ կը չարարեն ու կը հալածեն . որ ձեր երկնաւորը Հօրը որդիքը ըլլար . ինչո՞ւ որ իր արեւը կը լոյսարեւնէ չարերուն ու բարիներուն վրայ , և անձրեւ կը լորկէ արեւմտեան ու մեղաւորներուն վրայ» :
Մատթ . Ե . 44 , 45 :

Սրբեմն պիտի ըսեն , ի՞նչ պիտի ընէ եկեղեցին իր անարժան անդամներուն . պիտի թողնու որ անոնք իրենց գէշ ճամբուն մէջ յատաճանան , և չխանդիմանն՝ զանոնք :

Եւ որ պատասխանը գիւրի է . Եկեղեցին կրնայ և պարտաւոր

է իշխանութիւն բանեցունել գէշ վարմունք ունեցող անդամներուն վրայ՝ զանոնք պատժելով , բայց ան պատժը միշտ հոգեւոր և միշտ մարդասէր ըլլալու է : Թե որ եկեղեցին անդամները բաղըրութեամբ և հաս ոտառութեամբ խրատուէն և յանդիմանուէն ետէ՛ տակաւին յարատեւն մեղանշական վարմունքի մէջ , անտոնը եկեղեցին պարտի իր հաղորդակցութիւնը կտրել անոնցմէ՝ չտալով անոնց եկեղեցոյ անդամներուն սեփական եղած արտօնութիւնները . պարտի ետ պահել անոնցմէ հաղորդութիւնը և մկրտութիւնը . քանզի ասոնք են ան սուրբ բաները՝ որ տալ պէտք չէ ան չունեցուն , որ նորէն իրենց վրա խածին կողաւնան . ոչ ալ ան խոգեւուն՝ որ լուսաբանէն ետեւ նորէն տղին մէջ կը թապլըտըկին : (Տես Հոնմարան Հատոր Ե . երես 165 և Հատ. Օ . երես 32) : Բայց եկեղեցին պէտք է որ բուն աս մարդոց հետն ալ մարդասիրութեամբ վարուի , յուսալով որ դուրէ զանոնք նորէն իրենց պարտաւորութեանը դարձունէ . պէտք չէ որ Մատուցաւունքը գոցէ անոնց դէմ , այլ մանաւանդ պէտք է ջանայ կարգադրուել անոնց զանիկայ , որպէս զի կարելի է դարձի դան : «Կանապէս պէտք չէ որ արեւիկէ զանոնք քարովի դալեն , բայց թէ ֆարաւոր է նե՛կ համոզէ զանոնք որ զան մօրիկ ընեն զանիկայ՝ իրեն մէկ միջոց մը ատուածային շնորհքը ընդունելու և դարձի գալու : Եւ ամէն բանէն աւելի պէտք չէ որ երկնից դուռը գոցէ անոնց դէմ , (կամ աւելի աղէկ է ըսել , պէտք չէ որ այնպէս ցուցնէ թէ կրնայ գոցել Երկնից դուռը անոնց դէմ)՝ այլ ընդհակառակն պէտք է որ աղօթք ընէ Մատուցոյ երկնից դուռը բաց պահելու անոնց , և մինչեւ անոնց կեանքին վերջին վայրկեանը պէտք է աղաչէ պարտի անոնց որ ներս մտնեն :

Մեղաւոր աս ըսել կուզէ Պօղոս առաքեալ , երբոր կը պատուիրէ Վորթեացոյ որ իրենց եկեղեցւոյ անարժան անդամները Սատանային մատնեն մա մինը սատկուելու համար , որ հոգին փրկուի մեր Տէր Հիսուս Վրիստոսի օրը . (ն Վորթ . Ե . 5) : Իր նպատակը մոլորեալ մարդը խոնարհեցունել էր՝ եկեղեցին հաղորդութենէն կտրելով զանիկայ , որ այսպէս «մարմինը» իր անոր ներսիւն եղած մարմնաւոր սկզբունքը սպանուի , և զընդունի դալով փրկուի : Մահ աս էր պատճառը որ առաքեալը կուզէր Սատանային մատնել զանիկայ , իր աս աշխարհին իշխանին , Վրիստոսի եկեղեցին հաղորդակցութենէն կտրելով և աշխարհային մէկը համարելով զանիկայ :

Այնպէս նորէն կը դառնամք մեր բնաբանին՝ թէ մարմնաւոր միշտ կը հալածէ զհոգեւորը . քրիստոնէութեան սկիզբէն հետե միշտ ասանկ եղած է . և մէկը զարմանալու չէ աս բանին վրայ , ինտոր որ Պետրոս առաքեալ կըսէ Վրիստոսի ճշմարտութեան համար նեղութիւն կրողներուն . «Իրեկներ օտար բան մը մի սեպէ ան նեղութիւնին բորբոքը , որ ձեզ փորձելու համար կըլլայ , որպէս թէ օտար բան մը ձեզի հանդիպած . հապա ուրախ եղիք՝ որպէս թէ Վրիստոսի չարարանքներուն հաղորդ ըլլայիք , որ անոր փառքին յայտնուելու ատենն ալ ցնծա-

թիւնով զմայլէք : ն Պետ . Գ . 12 , 13 :